ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

3 դեկտեմբերի 2024թ. թիվ 1003-Ա

ՀՐԱՏԱՊՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՎ ՄԵԿ ԱՆՁԻՑ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի նոյեմբերի 15-ի «Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում վերաբաշխում և փոփոխություններ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 2323-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու ու հակահեղեղային անհետաձգելի միջոցառումներ իրականացնելու մասին» թիվ 1800-Ն որոշման Հավելված 7-ով, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերությամբ և 71-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված դրույթներով՝

Ո ր ո շ ո ւ մ ե մ.

1. Դեբեդ, Փամբակ, Ձորագետ և Տաշիր գետերի խնդրահարույց հատվածների մաքրման աշխատանքների ձեռքբերումն իրականացնել հրատապության հիմքով մեկ անձից գնման ձևով: Գնման ընթացակարգի հրավերը տրամադրել միայն գնման հայտում նշված անձանց (հնարավոր մասնակիցներին):

2. Որոշման կատարման հսկողությունը դնել մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետի վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Recoverable Signature

Ստորագրող
ԱՐԱՄ ՂԱԶԱՐՅԱՆ
2003720081

X

2024-12-03 19:10:51 GMT+4
Հանձնաժողովի է էԷՖՍԳ-ի կողմից

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Signed by: GHAZARYAN ARAM 2003720081 Ա.ՂԱԶԱՐՅԱՆ

2024թ. դեկտեմբերի 3
ք.Վանաձոր